ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06» հունիսի 2019 թվականի N:63 ք.Գյումրի

ԳՐԻԳՈՐ ՊԱՊՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 19-ի N:42/44.2/18332-2019 գրությունը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քարտուղարության պետ Գրիգոր Պապոյանին 2019 թվականի հունիսի 10-ից 11-ը ներառյալ ուղարկել Երևանի պետական համալսարան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից հաստատված «Մրցույթի հարցազրույցի փուլը վարելու համար հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ» ծրագրով վերապատրաստման դասընթացներին:
2. Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քարտուղարության պետ Գրիգոր Պապոյանին 2019 թվականի հունիսի 10-ից 11-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան:

3. Գրիգոր Պապոյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քարտուղարության պետի պարտականությունների կատարումը վերապահել քարտուղարության ընդհանուր բաժնի պետ Հասմիկ Հարությունյանին:
4. Գրիգոր Պապոյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է